ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Սեյսմշին» ՍՊԸ-ի 08.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Սեյսմշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Սեյսմշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 08.02.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են.

Քաղաքաշինության բնագավառում «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող

աշխատանքների)» ըստ հետևյալ ոլորտների՝ պահանջվող լիցենզիայի տեսակը՝ շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն:

ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ ընկերությունների հայտ են ներկայացրել նաև «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն, «Սեյսմշին» ՍՊԸ-ը և «Գ. Պապոյան» ՍՊԸ-ը կոնսորցիումը:

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ն 25.12.2017թ. հայտով ներկայացրել է Ընթացակարգի հրավերով պահանջվող լիցենզիան:

Ընթացակարգի գնահատող հաձնաժողովի 25.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3 կետի 3.1 և 3.2 ենթակետերի համաձայն՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հայտը հապատասխանել է հրավերին պահանջներին և գնահատվել է բավարար:

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ գնհատող հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին, իսկ երկրորդ տեղ զբաղեցնող՝ «Սեյսմշին» ՍՊ և «Գ.Պապոյան» ՍՊ ընկերություններին:

Պատվիրատուն www.gnumner.am կայքում 29.12.2017թ. հրապարակել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան և վերջինս ճանաչվել է հաղթող մասնակից:

«Սեյսմշին» ՍՊԸ-ն 27.12.2017թ. թիվ 12-17/369 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտե (այսուհետ նաև՝ Կոմիտե) և խնդրել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել տեղեկատվություն 08.02.2010թ. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրված թիվ 13763 (շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության) լիցենզիայի գործունեության վերաբերյալ:

Ի պատասխան վերը նշված գրության, Կոմիտեն 28.12.2017թ. թիվ 22/22.1/7868-17 գրությամբ հայտնել է, որ 2010թ. փետրվարի 8-ին ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրված (շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության) թիվ 13763 լիցենզիայի գործողությունը կասեցվել է, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2016թ. հուլիսի 7-ի թիվ 130-Ա հրամանով՝ ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 124-Ն որոշման պահանջների չհամապատասխանելու պատճառով:

«Սեյսմշին» ՍՊԸ-ն 29.12.2017թ. բողոք է ներկայացրել Գնումների բողոքարկման խորհրդին և խնդրել է.

1. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3 կետի 3.1 և 3.2 ենթակետերով կայացված՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին բավարարող և վերջինիս 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել մասին որոշումները և սույն որոշումից բխող այլ որոշումները:

2. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով 29.12.2017թ. հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Գնումների բողոքարկման խորհուրդը 26.01.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55 որոշմամբ կայցրել է հետևյալ որոշումը.

1. «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. բողոքը բավարարել:

2.«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. ներկայացված համանման բողոքը բավարարել մասնակի՝

ա) Պարտավորեցնել ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին հնարավորություն տալ շտկելու լիցենզիայում առկա անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը 31.01.2018թ. թիվ 5 արձանագրությամբ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրվել է անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:

Հանձնաժողովի 01.02.2018թ. թիվ 6 արձանագրությամբ վերը նշված ընկերության հայտը գնահատվել է բավարար և ճանաչվել է ընտրված մասնակից:

Նույն արձանագրությամբ սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր (արձանագրությունը հրապարակվել է 05.02.2018թ.):

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների

թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով ընթացակարգի հրավերի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են.

Քաղաքաշինության բնագավառում «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» ըստ հետևյալ ոլորտների՝ պահանջվող լիցենզիայի տեսակը՝ շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն;

Այսպիսով, «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն ուսումասիրելով Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով ընթացակարգի հրավերը, 25.12.2017թ. հայտով ներկայացրել է հրավերով պահանջնող լիցենզիան, որը տվյալ պահին ըստ Կոմիտեի կողմից տրամադրված գրության կասեցված է եղել, քանի որ չի համապատասխանել ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 124-Ն որոշման պահանջներին, այսինքն ընկերությունը իրավունք չի ունեցել և չունի ծավալելու նմանատիպ գործունեություն:

Իսկ ինչ վերաբերում է «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին շտկելու հնարավորություն տալուց հետո հայտը բավարար գնահատելուն, ապա գտնում ենք, որ այդ որոշումը ոչ իրավաչափ է, քանի որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ լիցենզիան կասեցված է եղել, իսկ ընկերությունը լիցենզիայի ներդիրները շտկել է միայն 15.01.2018թ-ին, այն է՝ հայտը ներկայացնելուց հետո:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ Երևանի քաղաքապետարանի ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

Պարտավորոցնել Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 01.02.2018թ. թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշումը:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «Սեյսմշին» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Խորհուրդը դիմել է Երևանի քաղաքապետարանին բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ Էդվարդ Շաքարյանը և Գագիկ Հուրոյանը:

3. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված միջնորդությամբ ներգրավվել է որպես երրորդ կողմ:

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ն 15.02.2018թ. թիվ 7156-18 գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն, ուսումնասիրելով «Սեյսմշին» ՍՊԸ-ի նույն իրավական հիմքերի վերաբերյալ 29.12.2017թ.-ին ներկայացրած բողոքը և «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի 16.01.2018թ.-ին ներկայացրած համանման բողոքը, 26.01.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55 որոշմամբ, ուսումնասիրելով «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տրամադրված (շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության) թիվ 13763 լիցենզիայի գործողության կասեցման հարցը (նաև ներդիրների բացակայության հարցը), ինչպես նաև նկատի ունենալով, որ թիվ 13763 լիցենզիայի գործողությունը այլևս կասեցված չէ (ներդիրները ներկայացվել էին Խորհրդին), որոշել է՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված համանման բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

ա. Պարտավորեցնել ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին, «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում առկա անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն տալ:

բ. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի «Սեյսմշին» ՍՊԸ-ի և «Գ. Պապոյան» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումը դադարեցնելու մասով պահանջը մերժել:

Ինչպես հայտնի է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Ի կատարումն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի իրավապարտադիր վերոնշված որոշման՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը 31.01.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ կատարել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 26.01.2018թ.-ի կայացրած իրավապարտադիր որոշումը և որոշման կատարման վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակել է www.gnumner.am համացանցային կայքում:

Մասնավորապես, ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը 31.01.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 26.01.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետով՝ որոշեց տալ հնարավորություն գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մասնակցին ծանուցելու պահից հաշված) շտկելու անհամապատասխանությունը:

01.02.2018թ. թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ 31.01.2018թ.-ին ոչ ավտոմատ ծանուցմամբ վերոհիշյալ կազմակերպությանը ուղարկվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ ծանուցումը, որը մասնակցի կողմից ուղղվել է:

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարել «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին:

Սակայն ներկայումս «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից 08.02.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/15 բողոքով վիճարկում է բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մասնակցին ծանուցելու պահից հաշված) շտկելու անհամապատասխանություն տալու որոշման իրավաչափությունը: Ըստ «Սեյսմշին» ՍՊԸ-ի՝ լիցենզիայում առկա անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն տալը (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներդիրների բացակայության պայմաններում) և

այնուհետև «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելը հանդիսանում է ՀՀ գնումների մասին օրենսդրության խախտում:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վիճարկվող գործողությունները կատարվել են՝ ի կատարումն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 26.01.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55 որոշման, քանզի ԳԲԽ-ԱՄ-2017/55 բողոքի քննության ընթացքում քննարկվել է «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի լիցենզիաների կասեցման և ներդիրների բացակայության հարցը, և այս պայմաններում ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը գտել է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը պետք է «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին լիցենզիայում առկա անհամապատասխանությունը (լիցենզիայի ներդիրները շտկելու հնարավորություն ընձեռնելով) շտկելու հնարավորություն տա:

Գտնում ենք, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 26.01.2018թ. կայացրած թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55 իրավապարտադիր որոշման պայմաններում, երբ «Սեյսմշին» ՍՊԸ-ի 08.02.2018թ. բողոքով վիճարկվում է ի կատարումն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 26.01.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55 որոշման՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը, «Սեյսմշին» ՍՊԸ-ի բողոքով ներկայացված պահանջը առարկայազուրկ է, ուստի խնդրում ենք ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին մերժել «Սեյսմշին» ՍՊԸ-ի 08.02.2018թ. բողոքը:

Ինչ վերաբերում 13.02.2017թ. ժամը 14:30 կայացած նիստի շրջանակներում ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ Է. Սարգսյանի այն հարցին, թե արդյոք «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն պետք է ծանուցվեր իր լիցենզիայի գործողության կասեցման վերաբերյալ, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը կասեցված է համարվում այդ մասին լիցենզավորող մարմնի որոշումը լիցենզավորված անձին պատշաճ հանձնելու կամ նրա մոտ մուտքագրվելու օրվանը հաջորդող օրվանից, եթե լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին որոշմամբ կամ օրենքով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

Տեղեկացնում ենք, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն ընդհանրապես տեղեկացված չի եղել, որ իրեն տրամադրված (շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության) թիվ 13763 լիցենզիայի գործողությունը կասեցվել է: Տեղեկացված

չլինելով թիվ 13763 լիցենզիան գործողության կասեցման մասին, «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն կատարել է լիցենզիայի համար նախատեսված պետական տուրքի վճարումները: Մասնավորապես, «ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ-ի թիվ 1318 և թիվ 1316 բանկային քաղվածքների համաձայն՝ 02.02.2016թ.-ին կատարվել է վճարում ՀՀ քաղաքաշինության նախարարություն շենք և շինությունների հետազոտության թիվ 13763 լիցենզիայի պետ. տուրքի գծով և 30.01.2017թ.-ին նորից կատարվել է պետ. տուրքի վճարում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարություն շենք և շինությունների հետազոտության թիվ 13763 լիցենզիայի համար (նշված ապացույցները ներկայացվել են ԳԲԽ-ԱՄ-2017/55 բողոքի քննության ընթացքում):

Բացի այդ, տեղեկացված չլինելով թիվ 13763 լիցենզիան գործողության կասեցման մասին, «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն իրավասու մարմնին ներկայացրել է նաև լիցենզիայի համար նախատեսված համապատասխան հաշվետվությունները, որոնք նույնպես ընդունվել են լիազոր մարմնի կողմից:

Եվ միայն «Սեյսմշին» ՍՊԸ-ն 29.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած ԳԲԽ-ԱՄ-2017/55 բողոքով է պարզ դարձել, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի լիցենզիայի գործունեությունը ժամանակավոր կասեցված է:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Էդուարդ Մարտիրոսյանը:

4. ԳԲԽ-ԷՍ-2018/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Սեյսմշին» ՍՊԸ-ի 08.02.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստաթղթերը, ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությունը, 29.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3, 08.01.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 4, 31.01.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 5 և 01.02.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրությունները, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը, «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի 15.02.2018թ. թիվ

7156-18 գրությամբ ներկայացված գրավոր դիրքորոշումը, ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացված ԳԲԽ-ԱՄ-2017/55 ծածկագրով որոշումը.

Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն, ինչպես նաև համատեղությամբ՝ «Սեյսմշին» ՍՊԸ-ն և «Գ.Պապոյան» ՍՊԸ-ն:

25.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 3.2-րդ կետով Հանձնաժողովը «Սեյսմշին» ՍՊԸ-ի և «Գ.Պապոյան» ՍՊԸ-ի համատեղությամբ հայտը գնահատել է բավարար:
- 4-րդ կետով Հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից՝ «Սեյսմշին» ՍՊԸ և «Գ.Պապոյան» ՍՊԸ համատեղությամբ:

Հանձնաժողովի 29.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով արձանագրվել է, որ Մրցույթի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը, հրավերով սահմանված ժամկետում, ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, որը նույն արձանագրության 2-րդ կետով գնահատվել է բավարար:

Նույն արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

«Սեյսմշին» ՍՊԸ-ն 29.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացրել է բողոք որով խնդրել է՝

1. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3 կետի 3.1 և 3.2 ենթակետերով կայացված՝ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին բավարարող և վերջինիս 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել մասին որոշումները և սույն որոշումից բխով այլ որոշումները:

2. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի վթարային շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքների

ձեռքբերման նպատակով հայտարարված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով 29.12.2017թ. հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. ներկայացվել է համանման բողոք, որով Ընկերությունը խնդրել է

1. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջներով, առաջարկել «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին շտկել լիցենզիայում առկա անհամապատասխանությունը՝ ներկայացնելով համապատասխան ներդիրներ:

2. Դադարեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի «Սեյսմշին» ՍՊԸ-ի և «Գ.Պապոյան» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումը:

Գնումների բողոքարկման խորհուրդը 26.01.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55 որոշմամբ կայացրել է հետևյալ որոշումը՝

1. «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից 29.12.2017թ. ներկայացված բողոքը բավարարել:

2. «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից 16.01.2018թ. ներկայացված համանման բողոքը բավարարել մասնակի՝ պարտավորեցնել ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին հնարավորություն տալ շտկելու լիցենզիայում առկա անհամապատասխանությունը:

Ի կատարումն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 26.01.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/55 որոշման՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը 31.01.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին տվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն:

Հանձնաժողովը 01.02.2018թ. թիվ 6 արձանագրությամբ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար և վերջինս ճանաչել է ընտրված մասնակից:

«Սեյսմշին» ՍՊԸ-ն 08.02.2018թ ներկայացված բողոքով Խորհրդին հայտնել է, որ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է հրավերով պահանջվող լիցենզիան, որը տվյալ պահին կասեցված է եղել, քանի որ չի համապատասխանել ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 124-Ն որոշման պահանջներին, այսինքն «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն իրավունք չի ունեցել և չունի ծավալելու նմանատիպ գործունեություն:

Ընկերությունը գտնում է, որ Գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-ԱՄ-2017/55 որոշմամբ կայացված «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին շտկելու հնարավորություն տալուց հետո հայտը բավարար գնահատելու որոշումը ոչ իրավաչափ է, քանի որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ լիցենզիան կասեցված է եղել, իսկ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ն լիցենզիայի ներդիրները շտկել է միայն հայտը ներկայացնելուց հետո:

Բողոքի քննության նպատակով 13.02.2018թ. կայացած նիստին, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ հիմք ընդունելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 26.01.2018թ. կայացրած իրավապարտադիր որոշումը՝ Հանձնաժողովը որոշել է հնարավորություն տալ «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունը: Ընկերությունը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը, ինչից հետո Հանձնաժողովը «Հուսալի Կամար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել է բավարար և հայտարարել Ընթացակարգի ընտրված մասնակից: Պատվիրատուի ներկայացուցիչը հավելեց նաև այն, որ լիցենզիայի ներդիրները Հրավերով պահանջված չի եղել և Ընկերութունները իրավունք ունեին կատարել աշխատանքները առանց ներդիրների առկայության:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:
- 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

- 42. Եթե նույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընթացակարգի Հրավերի՝

- 1-ին մասի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվել են հետևյալ լիցենզիաները՝ Քաղաքաշինության բնագավառում «Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)» ըստ հետևյալ ոլորտների՝ Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն:

- 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 8.9 Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն-քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը

- 8.10 Եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը կատարելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 26.01.2018թ. կայացրած ԳԲԽ-ԱՄ-20117/55 ծածկագրով իրավապարտադիր որոշումը և ընդունելով համապատասխան որոշում՝ հնարավորություն

տալով «Հուսալի Կամար» ՍՊԸ-ին շտկելու արձանագրված անհամապատասխանությունը և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելով գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սեյսմշին» ՍՊԸ-ի 08.02.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**